

ԱԻՆՏԻՔ ԱՐԱՄԻԱՆԵԱՆՑ

Ինքնակենսագրութիւն

92  
- 83

1717

107 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՂԲԻՐ-ՏԱՐԱԶԻ 107

Ա-83

21036

**ԱԻԵՏԻՓ ԱՐԱՄԽԱՆԵԱՆՆԵՐ**  
**ԽԵՐԿԱԿԱՆԵՐՈՒԹՅԱՆ**

(Գրած մեր խնդրանքը և բնագիրը Ա-Գրի-Տարածի տեղեկանքներով)


Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տարածան «ՀԵՐՄԵՍ» Գրատպության փ. № 6

1912

Հ.Ա.Խ. Դ. Բ. Կ.  
ՍԵՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱՅԻՆ ԿՈՒՅՐԱԿԱՆ  
7/IX-1912

11 APR 2013



## ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

Վ. Ագուլիսի մի տոհմից, որի հնութիւնը ապացուցուում է տեղի ս. Շմաւոն եկեղեցու, այժմ հանգած, հին գերեզմանատան քարերի արձանագրութիւններով. ներկայ 1911-ին լրանում է այդ տոհմի նախնիքներից Սանդուղու մահւան (1611) երեքհարիւրամեակը. ըստ տոհմական շիրիմի արձանագրութիւնների՝ Սանդուղուն յաջորդում են Աղամջանը, վերջինիս՝ Մահտեսի Մկրտում, ապա Ագուլը, վերջինիս՝ Թեանը, սրա որդին Հայրապետը († 1799 թ.), որի մասին յայտնի է, որ պարսից դրամ կտրող է եղել շրջանի համար (Վ. Ագուլիսը, ներկայումս մի աւան Նախիջևանի գաւառի, Երեւանեան նահանգում, Արարատեան երկրի պարսից խնութիւնների հետ ուսաց տէրութեանն անցաւ միայն 1828-ին. գիւղը չի եղել բէկական, այլ սեփական հողերով). Հայրապետի որդի Արասխանի († 1858) անունով, նա ինքը և իր չորս որդիք գրեցին Արասխանեանք, Դրանցից Հայրապետը († 1892) յայտնի ազգեցիկ անձն էր. մեր հրապարակախօս և հասարակական գործիչ Աւետիքը, Մկրտումի († 1907) որդին է, ծնւած հին տոմարով 13 փետրւարի 1857 թ. Վ. Ագուլիսում, ուր և անց է կացրել իր մանկութիւնը մինչև 14 տարեկան հասակը, ուսանելով նախ ս. Շմաւոն եկեղեցու տէր Սիմոնի մօտ, ապա Հայրապետ Քալանթարեանի, ապա վանքի և վերջը 1867-ին հիմնած հայոց ծխական դպրոցներում, երբ այդտեղ գործում էր մի ուսուցչակոն խումբ, որի մէջ էին Պերճ Պոռչեան, Ռուբէն Չալալեան, Սամուէլ Գիւլգաղեան և այլք: Որպէս զաւակ իր ժամանակի հարուստ ընտանիքի՝ 1870-ին հայրը զրկում է նրան Թիֆլիս, ուր հինգ ամիս պատրաստելուց յետոյ մտնում է ոչալ դպրոցը, որ և աւարտում է 1876 թ.ին: Թիֆլիս այդ տարիներում նա ապրում է նախ ֆրանսերէնի ուսուցիչ Բալտալոնի, ապա ոչալ դպրոցի հայերէնի ուսուցիչ Ստ. Պալասանի, ապա մի գերման ընտանիքում և այլ տեղեր: Պալասանի մօտ ապրած ժամանակ սկսում է հրատարակել Մշակ լրագիրը, որի սկզբնական աշխատակիցներից էր առաջինը. դրա շնորհիւ և Արասխանեանցը պատանի հասակից, ոչալ դպրոցի աշակերտ ժամանակ, ծանօթանում է Գրիգոր Արծրունու թերթի և ապա նաև անձնապէս նրա հրատարակչի, իսկ վերջինս խմբագրական ժողովների շնորհիւ նաև Բաֆ-

Էջմիածնի Ագուլիսի  
 Վ. Ագուլիսի  
 Արասխանեանք  
 2/1911

Ֆուհետ: Աշակերտութեան շրջանին է վերաբերում բժ. Բոկի «Դործնական խրատներ» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը և տպագրութիւնը, որպէս նաև նրա անդրանիկ յօդուածը արհեստագիտական ուսման անհրաժեշտութեան մասին ծխակ. դպրոցներում (1875 թ.): Միջնակարգ դպրոցը աւարտելով՝ Արասխանեանցը նոյն 1876-ին ուղևորուեալ է արտասահման քաղաքատնտեսութիւն ուսանելու, կոչուեալ զգալով հրապարակաստութեան և հասարակական գործունէութեան համար: Արտասահմանում երեք սեմեստր Լայպցիգի համալսարանում է ուսանում, լսելով քաղաքատնտեսութիւն (Ռոշէրի մօտ), իրաւագիտութիւն (Վինդտշայդտի մօտ), պատմութիւն, փիլիսոփայութիւն. ապա համաշխարհային ցուցահանդէսի տարին 1878-ին անցնում է Պարիզ, ուր, մնալով երկու սեմեստր, ուսանում է նոյն առարկաները իրաւագիտական ֆակուլտէում, «Կոլլէժ դը Փրանսա»-ում (Պոլ Լըոսա Բոլիէս, Լըասսէօր Շարլ Բլանի և այլոց) և Բուլթմի հիմնած Ecole des sciences politique բարձրագոյն դպրոցում: Այդտեղ ազգային կրթական ընկերութեան մէջ նրա կարգացած երկու ռեֆերատները բանւորական ընկերութիւնների և առևտրական դաշինքների մասին յիշատակում են այդ դպրոցի ուսանողական annuaire-ի մէջ (1872 թ.):

Յիշելու է, որ Բերլինի կոնգրէսում հայկական հարցի քննութեան օրերում Պարիզի Temps լրագրում իբրև երկրորդ առաջնորդող տպուած անստորագիր յօդուածը այդ հարցի առթիւ պատկանում է Արասխանեանցի գրչին: Արասխանեանցը սակայն թողնում է Պարիզը, գտնելով իր նախընտրած առարկաների դասաւանդութիւնը վատ դուած այդտեղ, և անցնում նորից Գերմանիա, Ստրասբուրգի համալսարանը, ուր այդ ժամանակ դասախօսում էին պրօֆէսորներ Շմոլլէր (քաղաքատնտեսութիւն), Կլնապ (ստատիստիկա, սոցիալական վարդապետութիւններ), Լարանդ (պետական իրաւունք), Զոմ (գերման իրաւունք):

Այդտեղ նա մնաց երեք տարի մինչև դոքտորական քննութիւն տալը 1882-ին: Շմոլլէրի քաղաքատնտեսական վարժոցի հիմնական անդամներից էր և այնտեղ պատրաստած աշխատութիւնների համար նա ստացաւ ֆակուլտէտի առաջին մրցանակը: Այդ տարիներին է պատկանում և նրա ծանօթութիւնը և բարեկամութիւնը ուսաց ծառայութեան մէջ գտնուած գուրք Գէօրգ Գէօրգիէլէի Մէկլէնբուրգ-Ստրելիցկու հետ, իր մօր՝ Եկատերինա Միխայլովնայի կողմից ծոռքը կայսր Պաւէլի (այդ մերձաւորութիւնից Արասխանեանցը օգտուեց մի միակ անգամ. յետագայում Մուրն ամսագրի հրատա-

րակութեան թոյլտուութիւնը ստանալու համար): Ստրասբուրգում նա պատրաստեց իր մի գիտական հետազոտութիւնը Ֆրանսիական անտեսական պատմութեան վերաբերեալ, որը արժանացաւ տպագրութեան Շմոլլէրի «Պետական և սոցիալական հետազոտութիւնների շարքում: Մասնագէտներին յայտնի է, որ այդ աշխատութիւնը առաջացրեց մի շարք այլ հետազոտութիւններ թէ Գերմանիայում, Փրանսիայում և Ռուսիայում, ինչպէս այդ երևում է Ֆրիդրիխսէնի մի հատոր շարադրութիւնից և Հոգէի սրա առթիւ տպուած գրախօսականից մի քաղաքատնտեսական ամսագրում 1898 թւից: Արասխանեանի այդ աշխատութիւնը յիշում է ի միջի այլոց և Շէօնբէրգի քաղաքատնտեսական էնցիկլօպէդիայի մէջ:—Համալսարանը աւարտելուն պէս անմիջապէս նա հրաւէր է ստանում պրօֆ. Շմոլլէրից վերջինիս հրատարակած ամսագրում իր օգնական լինելու ձեռնով, պատրաստելով ակադեմիական կառիէրի համար, միաժամանակ ծառայելով և Գերմանիայի կենտր. ստատիստիկական պաշտօնատեղում: Բայց Արասխանեանցը այդ պատուաւոր առաջարկներից հրաժարուեալ է հայրենիքում գործելու ձգտման պատճառով: Ապա վեց ամիս անցկացնելով Բերլին և Մոսկու, հոկտեմբերից 1882 թւի հաստատուեալ է Թիֆլիս, ուր, շարունակելով իր աշխատակցութիւնը Մշակիմ, որին նա աշխատակցում էր արտասահմանից, 1883—1885 դպրոցական տարիներում ընդհանուր պատմութեան ուսուցիչ է լինում Թիֆլիս, Ներսէսեան ու Գայիանեան դպրոցներում. 1884-ին, երբ Գ. Արծրունին դադարեցնում է Մշակը, Արասխանեանցը աշխատակցական մի խումբ կազմելով, առաջարկում է նրան գիշել իրեն Մշակի հրատարակութիւնը, որպիսի նպատակով իրարից անտեղեակ գործում էր և Բաֆֆին Գ. Միրզոյեանի և Ն. Աբելեանի հետ միասին, բայց ոչ մէկ և ոչ միև խմբին չաջողեց Արծրունուց այդ արտօնութիւնը ստանալ: 1885—6. ին, երբ Պետական կալուածների մինիստրութեան Կովկասի լիազօր Տիխէեիին հարկաւոր եղաւ մի խումբ կազմել Անդրկովկասի պետական հողերի վրայ հաստատուած գիւղացիների անտեսական գրութիւնը ուսումնասիրելու համար, գիմում եղաւ նաև պ. Արասխանեանցին, որը, ընտրելով իր համար Նուիւայ և Արէշի գաւառները, վեց ամիս շարունակ պտըտեց այդ երկու գաւառների բոլոր, մինչ երկու հարիւր գիւղերը, իսկ միև վեց ամսում պատրաստեց իր աշխատութիւնը յանձն առած նիւթի մասին, որ և տպւեց «Материалы по изуч. быта госуд. крестьянъ въ Закавказ. краѣ», հատորներում: (Նոյն խմբի մէջ գործեցին ի միջի այ-

լոց և Ալ. Երիցեան, Քր. Վերմիշեան, Իշխ. Ալ. Մ. Արդուժեան և այլք, ընդամենը քսան հոգի)։ Յիշելու է, որ 1883-ին Արասխանեանցը, առաջին անգամ կովկասում առհասարակ, հրապարակական դասախօսութիւններ արաւ քաղաքատնտեսութիւնից (նախկին Արծրունու թատրոնում)։ Թւով եօթ դասախօսութիւններից երկուսը «Ազգաբնակչական շարժումներ» և «Հողի արտադրութիւնը եւ հասարակութիւնը» առանձին մշակումի ենթարկելով լոյս տեսան գնդապետ Ալ. Մելիք-Հայկազեանի առաջարկովը ու ծախքովը։ Յիշենք նաև երկու հետազօտութիւն, որ նա կատարեց 1886 և 1887 թւականներին. մէկը Անդրկովկասի մետաքս թելի մանարանների, միւսը Անդրկովկասի հայ առևտրի մասին, երկուսըն էլ տպւած Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան «Труды»-ների մէջ և առանձին էլ արտատպւած բրոշուրներով։—1885-ի վերջերքը երբ Արծրունին վերադարձաւ արտասահմանից «Մշակ» ի հրատարակութիւնը վերսկսելու համար, նա հաւաքեց իր նախկին աշխատակիցներին, բայց հէնց սկզբից երևան եկաւ նրա և աշխատակիցների մեծամասնութեան մէջ անհամերաշխութիւն թերթը առաջ տանելու պայմանների մասին. այդ ժամանակին է վերաբերում Բաֆֆու և մի քանի այլոց հեռանալը Մշակից. նոյն այդ ժամանակ Արասխանեանցը եղաւ մերձաւորագոյն աշխատակիցը Մշակ-ում, բայց արդէն միայն քանի ամիս։ Արծրունին առաջարկում էր Արասխանեանցին կոչել Մշակի հրատարակիչ և լինել իր խմբագրական օգնականը, թերթը երկուսի ոյժերով առաջ տանելու համար. այդ առթիւ ծագած տարաձայնութեան հետևանքով Արասխանեանցը նազ առնւազ ետ քաշեց Մշակից, և յարաբերութեանց լարածութիւնը իր լուծումն ստացաւ անձնական ծանօթութեան խզումով։ 1887-8 թւին նա նորից պաշտօնավարեց Ներս. դպրանոցում և դրա արդիւնքն եղաւ նրա «Արևելեան ազգերի հին պատմութիւնը» ծանօթ և գնահատւած դասագիրքը (տպ. 1892-ին)։ 1888-ին նա հիմնում է «Առևտրա-Արդիւնաբերական կուրսեր» (ոռուսաց լեզուով), ուր, բացի իրենից, հրաւէրքով դասախօսում էին յայտնի մասնագէտներ Անդրրկովկասի այլ և այլ արդիւնաբերական ճիւղերից։ Սկզբից արդէն այդ կուրսերը բաւական թւով վճարով ունկնդիրներ ունեցան, իսկ յաջորդ տարին խոստացւում էր աւելի մեծ յաջողութիւն, բայց Արասխանեանցը վճռում է փակել այդ ապահով ապագայ խոստացող կուրսերը, ամբողջապէս զինքը իր սրտին աւելի մօտ գործին նւիրել կարենալու համար։ Դա էր հանրածանօթ «Մուրճ» ամսագիրը, որը նա սկսեց

հրատարակել 1889-ի յունւարից, շարունակելով այն մինչև 1900 թ. յունիսը, տասներկու տարի անընդհատաբար, մինչդեռ, որպէս յայտնի է, Մուրճի նախորդները՝ Հիւսիսամիայլ, Կոստնկ. Փորձ հազիւ կարող եղան 4—6 տարի հրատարակել։ Ծնւելով կուտակւած պարաքերից, 1900-ին նա իր ամսագրի հրատարակութեան իրաւունքը վաճառեց պ. Կոստ. Կրասիլնիկեանին, զինքը մի քանի տարի նւիրելով հանրային և այլ մասնաւոր գործերի և կարեւորագոյն գրաւոր աշխատութիւնների, առաջ տանելով մանաւանդ նրա ժողովելը մի «Արևելագիտական հանրագիտարանի» համար, որ նա հասցրեց 5 խոշոր ձեռագիր հատորների։ 1905-ի թուրք-հայկական ընդհարումներին նա ընտրւում է Թիֆլիսի Կենտրոնական Նպաստամատոյց յանձնաժողովի անդամ, և լինելով միաժամանակ Մոզնու եկեղեցու երէցփոխ (1904—1906), երկու տարի պատասպարեց մինչև վաթսուն հոգի արկածեալ գաւառացիների՝ եկեղեցու բակում եղած շինութիւնների մէջ, հայթայթելով նաև նրանց արուստը թէ Նպաստամատոյցից և թէ ձեռքից եկած այլ միջոցներով։ Նոյն 1905-ին, երբ ներքին գործերի մինիստր Բուխրինին այլ և այլ ազգութիւններն իրենց պետիցիաներ տալու իրաւունքը տրւեց, և այդ առիթով մեծ ժողով գումարեց Թիֆլիս, Արասխանեանցը ընտրեց և գործոն անդամներից եղաւ հայկական պետիցիան մշակելու և կառավարութեանը մատուցանելու Յանձնաժողովի։ 1906 վերջերքը Արասխանեանցին տեսնում ենք անդամ մի պատուիրակութեան, որին յանձնարարւած էր Նպաստամատոյցի կողմից Ռուսիայի հայաշատ քաղաքներում պրոպագանդա անելու և կազմակերպելու ժողովարարութեան գործը յօգուտ Անդրկովկասում անբերրութիւնից և թուրք-հայկական ընդհարումներից փաստւած գաւառների։ Անդամ էր թիւրքա-հայոց սովեխների կոմիտէի (Թիֆլ. 1907-8 թ.)։ Նոյն տարիների գործ է Արասխանեանցի ձեռնարկութիւնը Կարլ Մարքսի հոչակաւոր «Կապիտալ» երկը թարգմանելու, որի հրատարակութիւնը դեռևս սպասում է կարող հրատարակչի։ Այդ տարիներում մենք նրան տեսնում ենք աշխատակից 1906—7-ին պ. Գ. Մելիք-Կարապէտօզեանի հրատարակած «Արշալոյս» օրաթերթին, ուր, բացի մի շարք առաջնորդողներից, տպւում էր Արասխանեանցի ընդհանուր ուշադրութիւնը գրաւած «Հայրենական խոհանոր ուշադրութիւնը գրաւած «Հայրենական խոհանոր» յօդւածների շարքը, որ կիսատ ֆուստ թերթի փակման պատճառով։ 1907-ին նա ընտրւում է հինգ փակման պատճառով։ 1907-ին նա ընտրւում է հինգ տարով մի նաւթային ակցիոնեական ընկերութեան

դիրեքտոր որպէս նրա վարչութեան անդամ, իսկ 1909-ին դրա հետ միասին նա հրաւիրուում է Կովկ. Հայ. Բարեգ. Ընկ. խորհրդի կողմից ընկերութեան գրադարանը կարգի բերելու համար: Մատթէոս Բ. կաթողիկոսի էջմիածին ժամանելուց յետոյ հրաւեր ստանալով էջմիածնից ձեւարանում քաղաքատնտեսութիւն և ընդհ. պատմութիւն դասաւանդելու համար, Արասխանեանցը թողնում է վերոյիշեալ պաշտօնները ու մեկնում էջմիածին, ուր, բացի ուսուցչութիւնից, նշանակւում է կաթողիկոսի կողմից անդամ միայն մի տարի գոյութիւն պահպանած Կենդրոնական Ուսումնական Յանձնաժողովի, որը նրան ընտրում է իր քարտուղար և Վեհափառի առաջ Յանձնաժողովի կողմից գեկուցանող: Միաժամանակ Շիրակի չորս հարիւր հայ ընտանիքների կողմից երկու լիազօրներից մէկը նշանակւած լինելով Խօթալանքի ընդարձակ կալածքում բնակութիւն հաստատելու գործի համար, Արասխանեանցը դրանով միայն մի աւելորդ առիթ ձեռք բերաւ էջմիածնական անթափանցելի մթնոլորտի հետ աւելի մօտ ծանօթանալու համար, որի մասին նա առաջ միայն ի լրոյ գիտէր: Նա գտաւ, որ բուն ձեւարանը, այսինքն լսարանական մասը դրւած է կատարելապէս հակադիտական հիմունքների վրայ, և այդ պատճառով ձեւարանը աւելի բացասական բան դրական հետեանքներ է տալիս: Ուսուցիչ մնաց նա ձեւարանում հազիւ երկու տարի, (1909—11): Ի վերջոյ յիշելու է, որ Արասխանեանցը գործօն մասնակցութիւն է ունեցել Կովկ. Հայոց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովներում մօտ երկու տասնեակ տարիների. առանձնապէս վերհանելու է այն, ուր ընկերութեան (Խուզարեան) որբանոցը Արասխանեանցի մտքի յղացումն է, մինչդեռ ընկերութեան խորհրդի առաջարկը եղել էր Խուզարեան կտակի ֆոնդի հանրակացարան բացանելը: Վերջին մի երկու տարին, տեսնելով իր հայրենի գիւղի հասարակական գործերի աւելի վիճակը, մեծ ջանքեր է գործ դնում գիւղի առաջընթացութեան վրայ, աշխատելով կանոնաւորել խանգարւած աղբիւրների վերականգման վրայ, ջանքեր անելով հայրենի գիւղի ու նրա շրջակայ մի քանի տասնեակ գիւղերի համար մանր վարկի ընկերութիւն հիմնելու և այլն: Ունի գետեղած երկու յօդւած «Աղբիւր»-ում և բաւական թւով «Տարազ»-ում և գերման. սուս և հայ այլ և այլ թերթերում: Տարազի խմբագրի Թիֆլիսից բացակայութեան ժամանակ (1896 թ. Նիկոլայ II Թագաւոր Կայսեր թագադրութեան) մի քանի ամիս եղել է և նրա փոխ-խմբագիրը:



# XXXI ԱՂԲԻՐ ԵՒ ՏԱՐԱԶ XXIV

ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ, ՄԱՆԿԱՆԱԲԺՅԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ,  
ԲՆԱՆՊԱՏԱԿԱՆ, ՔՕՂԱՔՕԳԻՏԱԿԱՆ

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Դ Հ Ա Ն Գ Է Ս Ն Ե Ր Ի

Հրատարակում են ձոխ, բազմաբովանդակ, մասնակցու-  
թեամբ մեր և եւրոպական յայտնի գրականագէտների,  
արևեստագէտների, գեղագէտների և մանկավարժների:

Անընդհատ 30 տարիներ լոյս տեսնող ԱՂԲԻՐԻ և  
23 ձիգ տարիներ հրատարակող Տարազի մասին առել,  
թէ ինչպէս լոյս կը տեսնի 1913 թւականին ԱՂԲԻՐԻ  
իր 31-րդ տարիչըջանում, կամ ՏԱՐԱԶԻ ԻՐ 24-րդ տա-  
րիչըջանում, մենք վայելուչ չինք գտնում խօսքերով առել:  
Այդ խօսքը պատկանում է հայութեան: Մենք անտրտունջ  
կը շարունակենք մեր գործը, թեակոխելով ԱՂԲԻՐԻ  
չորրորդ տասնամեակը, այնպէս, ինչպէս թելադրում է մեզ  
մեր գիտակցութիւնը: Մենք ծառայում ենք մեր սի-  
րած գործին, հաւատարիմ մեր կոչման. Իսկ վերջը, մի օր  
եթէ հայութիւնը սթափւի, նա թող իր նախորդից հաշիւ  
պահանջէ և լինի նրա դատաւորը: Իսկ մենք անվատ կըն-  
թանա՞ք աւելի մեծ խնդակցութեամբ և 1913 թւականին:

## 1913 թ. յաւերածներն ու պրէմիաները՝

I. Ս. ՍԱՀԱԿ. II Ս. ՄԵՄՐՈՊ. III Հայոց վեհափառ  
Հայրիկը Օճականում: IV ՎԵՀՎՓԷՌ ԻԶՄԻՐԼԵՍԻ: (18 գոյնով)  
V ԻԶՄԱՆ Ս. ՏԱՃՈՐԸ: VI Ս. ԷԶՄԻԱՄԻՆ 18-րդ ԳԱՐՈՒՄ:  
VII ՎԵՀՎՓՍՌ ԻԶՄԻՐԼԵՍԻ ՌԻՂԵՒՈՐՈՒԹԻԻՆԵԸ: VIII  
ՂԻԻ ՀԱՅՐԱՄՏԱՆԻ: IX վեհափառ Իզմիրեան Սանահում:  
X Իր ճախմբով: XI ՃԱՆԱՊԱՐՀԻՆ: XII Ներսիսեան ու-  
սումնարանի հիմնադրութիւնը: XIII ՇՂԱՆՈՒՐԲԸ ՍԱՆԱՀ-  
ՆՈՒՄ: XIV ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻԻՆԵՆԵՐԸ: XV Գեղա-  
փնչիկ-օրացոյց 1913 թ. XVI ՄԱՆԿԱԿԱՆ - ԱՇԽԱՐՀ:  
XVII ՏՕՐԻ ԵՒ ՄԱԼԻ: XVIII Թատրոն և Երաժշտութիւն:  
XIX ԱՌՈՂՋԱՊԱՆ: XX ԱՂԲԻՐԻ ԱԿՈՒՆՔ: XXI ՄԱՆ-  
ԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ: XXII Ինկուռոյն սի պիլո: XXIII Հա-  
զար-հինգ-հարիւր ամսակ հայ գրի: XXIV Չորս-հարիւր  
ամսակ Հայ տպագրութեան: XXV ԽՕՄՔ ԵՒ ԳՈՐԾ:

## Բաժանորդագրութեան պայմաններ

ԱՂԲԻՐ՝ տարեկան 3 ռ. (Արտասահման 5 ռ.) ԱՂԲԻՐ-  
ՏԱՐԱԶ բոլոր յաւերածներով և պրէմիաներով տարեկան  
10 ռ. (Արտասահման 13 ռ. կամ 50 Ֆր.)

Գրքոցակցան աշակերտների համար  
ԱՂԲԻՐ-ՏԱՐԱԶ բոլոր 25 յաւերածներով,  
պրէմիաներով տարեկան 5 ռ., ԱՂԲԻՐԸ ա-  
ռանց պրէմիաների 2 ռ.

Ապտիկ և մաս մաս բաժանորդագրութիւն չէ ընդունում:  
Հասցէն՝ Тифли. Редакция „АГБИОР“ կամ „ТАРАЗ“.  
Tiflis, (Caucase) Direction Agbür կամ Taraz.



